



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

14 հոկտեմբերի 2019թ. թիվ 1500

Ա.ՄԻԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԵՎ  
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 09.10.2019Թ.  
ԹԻՎ 1477 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 11-րդ և 12-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի հունիսի 7-ի թիվ 01/27/5615-19 և ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի հունիսի 14-ի թիվ 01/114.3/04231 գրությունները՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Արարատի Մխիթարյանին (65-3.2-78) 2019 թվականի հոկտեմբերի 14-ից 25-ը ներառյալ գործուղել ք.Երևան՝ «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ ներկայացված հայտի համապատասխան՝ վերապատրաստում անցնելու համար:

2. Ա.Մխիթարյանի բացակայության ժամանակ փոխարինող նշանակել ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Նունե Խաչատրյանին:

3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործուղման հետ կապված ծախսերը կվճարվեն վերապատրաստում իրականացնող կազմակերպության կողմից:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 1477 հրամանը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

 Invalid signature

X   
ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 14  
ք.Վանաձոր